**ՊԵՏՐՈՍ ՀԱԿՈԲԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ**
*Բանասիրական գիտությունների դոկտոր*
*ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի*
*առաջատար գիտաշխատող*
*pdemirchyan@mail.ru*
ORCID ID: 0009-0003-6265-1421
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-55

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

***Բանալի բառեր՝*** *Պարույր Սևակ, Սերգեյ Սարինյան, բանաստեղծական անհատականություն, պատմականության, գիտականության սկզբունքներ, փիլիսոփայական ոգի:*

***Ներածություն***

Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի՝ որպես քննադատ-գրականագետի մտածողությունը նրա անցած գիտական երկարատև ճանապարհի հենց սկզբից՝ անցյալ դարի 50-ական թվականներից, ուղղված է եղել **համակարգվածության, պատմականության** և **գիտականության** հիմնարար սկզբունքների յուրացմանը: Անցյալի թե ներկայի որևէ երևույթ նա ձգտում էր դիտել ոչ թե առանձնության մեջ, այլ անպայմանորեն դրա ներքին (երբեմն՝ թաքուն, անտեսանելի) պատճառահետևանքային կապերի, **համակարգի** կոնտեքստում, ինչպես ինքն էր ասում՝ «իրերի աշխարհից» անցում կատարելով դեպի «սիստեմների աշխարհը»: Այստեղից էլ՝ Սերգեյ Սարինյանի մտածողության մյուս կարևոր սկզբունքը՝ **ռացիոնալիզմը,** ինչը՝ նրա բնորոշմամբ, ապահովում է հետազոտական մտքի «ազատագրումը էմպիրիզմից և սոցիոլոգիական սխեմատիզմից, նրա տեսա-

դաշտի և աշխարհայացքի ընդլայնումը պատմության, փիլիսոփայության և բնական գիտությունների հետազոտական փորձով»: Մեթոդաբանական նշված դրույթները, իր իսկ խոստովանությամբ, «ուրույն ուղղություն նշանավորեցին հայ գրականագիտության պատմության մեջ՝ **ակադեմիական դպրոցը** (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[1], որի հետ և նա կապում էր հայոց գրականագիտական մտքի զարգացման հեռանկարը:

Նաև իր անհատական խառնվածքի առանձնահատկություններով (ուժեղ կամք, ինքնավստահություն, իր բնորոշմամբ՝ «անհանգիստ ոգի») պայմանավորված՝ հիշյալ բարձր սկզբունքները, սակայն, մեկ այլ կողմով դուռ են բացել նաև գրական կյանքի պրակտիկ հարաբերություններում երբեմն-երբեմն առաջ եկող թյուրըմբռնումների, փոխադարձ անհասկացողության դրսևորումների համար: Դա հիմնականում արտահայտվել է գիտական ճանապարհի առաջին քայլերի ընթացքում, նրա քննադատական ելույթների առիթով: Այս տեսակետից բնորոշ է, մասնավորապես, Պարույր Սևակի անհատականության և պոեզիայի նկատմամբ սարինյանական վերաբերմունքի և գնահատության ընթացքը:

Հետազոտության նպատակը Պարույր Սևակի անհատականության և ստեղծագործության գնահատության բացահայտումն է՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի մտածողության հիմնարար սկզբունքների՝ **համակարգվածության, պատմականության** և **գիտականության** համատեքստում:

Այս տեսակետից քննվող կարևոր խնդիրներից է, մասնավորապես, Պարույր Սևակի անհատականության և պոեզիայի նկատմամբ սարինյանական վերաբերմունքի և գնահատության

---

[1] **Սարինյան Ս.,** *Ետադարձ մտորումներ, Հայոց գրականության երկու դարը,* գիրք չորրորդ, Երևան, «Զանգակ-97», 2004, էջ 543–544:

ընթացքի, ավելի որոշակի՝ զարգացման դինամիկայի բացահայտումը:

Ըստ այդմ, վերլուծական-մեկնաբանական մեթոդներով հանգամանորեն անդրադարձ է կատարվում անցյալ դարի 50-ական թվականների կեսերից Պ. Սևակի ստեղծագործությունների՝ «Նորից քեզ հետ» (1958), «Անլռելի զանգակատուն» (1959), «Մարդը ափի մեջ» (1963), «Եղիցի լույս» (1969) ժողովածուներին և այլ երկերի Ս. Սարինյանի քննադատական-գրականագիտական արձագանքներին, ինչպես նաև երբեմն-երբեմն դրանց շուրջ բռնկված գրական բանավեճերին:

***Գնահատության ընթացքը. զարգացման դինամիկան***

Գրականագետի առաջին անդրադարձը Պարույր Սևակի բանաստեղծությանը եղել է 1958 թվականին[2]: Իր բնորոշմամբ դրանք «քննական դիտարկումներ» էին երիտասարդ բանաստեղծի մեկ տարի առաջ լույս տեսած չորրորդ՝ «Նորից քեզ հետ» ժողովածուի «ձևաբովանդակային կառուցվածքի վերաբերյալ: Միանգամայն ստույգ դիտարկումներ (...) ստեղծագործական որոնումների դարձակետին»[3]: Ըստ էության, այդ հոդվածը յուրովի պատասխանում էր Պ. Սևակի «Նորից քեզ հետ» ժողովածուի մասին ավելի վաղ Գուրգեն Մահարու հրապարակած գրախոսականին[4], որն, ի դեպ, ծնունդ տվեց նաև բավական ծավալուն բանավեճի: Մահարու արձագանքը երիտասարդ Պ. Սևակի նոր գրքին ընդհանուր առմամբ դրական էր: Ըստ նրա՝ Սևակի մուտքը արդի պոեզիայի համար անակնկալ էր. նա մի բանաստեղծ էր, «որը կարծես գիշերով ներս մտավ պոեզիայի դռներից, բաց դռները ջարդելով»: Մահարին ընդունում

---

[2] **Սարինյան Ս.,** *Պոեզիայի մեծ բովանդակության համար*, Երևան, «Գրական թերթ» (ԳԹ), 1958, թիվ 36:

[3] **Սարինյան Ս**., *Պարույր Սևակ (Բանաստեղծության գիտությունը)*, Երևան, «Հայաստան» հրատ., 2006, էջ 3:

[4] **Մահարի Գր.**, *Ինքնատիպ բանաստեղծի հետ*, Երևան, «ԳԹ», 1958, թիվ 17:

էր Սևակի տաղանդը, «ոճային շեշտված անհատականությունը», պոետիկայի ինքնատիպությունը: Այդ ամենով «Սևակը նորարար է.- գրում է նա,- նրա այս գիրքը մի ուշագրավ երևույթ է մեր գրականության մեջ և արժանի է քննադատների լուրջ ուշադրությանը»: Միաժամանակ, ավագ գրողն անում է մի քանի դիտողություններ: Օրինակ՝ ըստ նրա, քնարականի կողքին գրքում առկա խոհական բանաստեղծություններում «միշտ չէ, որ բանաստեղծին հաջողվում է մատը դնել ճակատին և լուրջ մտածել»: Մասնավորապես, «Ութնյակների» մշակված մարգերում», (...) պահելով հանդերձ իր անհատականությունը, նա խունանում է, կորցնում է իր փայլը, իր շողքը...»: Ըստ այդմ, խրախուսելի է համարում բանաստեղծի ոչ թե «չափված-ձևած», այլ «թևավոր, թևաբաց» տողերը: «Հաճախ բանաստեղծը հարկադրում է իր հերոսին զսպել իրեն, լուռ զգալու փոխարեն բարձրաձայն մտածել»: Արտահայտում է նաև իր խորհուրդներն ու ցանկությունները՝ բանաստեղծի հետագա գործերում քնարական հերոսի հույզերին ու խոհերին ավելի լայն ազատություն տալու վերաբերյալ: Դժգոհելով, որ գրքին դեռ ոչ մի քննադատ չի անդրադարձել, Մահարին հավաստում էր, որ «Իսկապես դժվար է գրել այս գրքի մասին, հեշտ գրախոսականով օձիքդ չես ազատի, ինչպես ես, իսկ իմ գրածը գրախոսական չէ, այլ տպավորություններիս շարադրանքը: Պարույրի գիրքը ավելին է պահանջում»: Նրա համոզմամբ, «Քննադատության պարտքն է զբաղվել այս գրքով, ցույց տալ այն նորը, որը բերել է Սևակը, վեր հանել ընդունելին և անընդունելին, օգնել տաղանդավոր բանաստեղծին իր վերելքի ճանապարհին»[5]:

Սերգեյ Սարինյանի հոդվածում ընդհանուր գնահատականներն ավելի խիստ էին: Նա Սևակի նոր գիրքն ու պոեզիան դիտարկում-քննում էր ժամանակակից հայ բանաստեղծության

[5] Նույն տեղում:

ընդհանուր վիճակի և զարգացման միտումների համատեքստում: Նշելով անցած չորս-հինգ տարիներին խորհրդային իրականության մեջ, ժողովրդի կյանքում կատարված «հարուստ գաղափարական տեղաշարժերը», նաև պոեզիայի ոլորտում նկատվող գաղափարական ու գեղարվեստական «լուրջ նվաճումները»՝ գրականագետը միաժամանակ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ «մեր պոեզիան չի հասել այն գերագույն նպատակին, որն իսկական ժողովրդային գրականության իմաստն է՝ շեշտված արդիականություն և մեծ բովանդակություն»**:** Ըստ նրա՝ «արդի պոեզիայի բովանդակությունը դեռևս նեղ է, նրա ընդգրկումը փոքր, այն ամբողջ էությամբ չի ներթափանցված հասարակական պրոբլեմատիկայով: Զարմանալի հակում է նկատվում դեպի սենտիմենտալ ինքնազգացումը, բանաստեղծներն ավելի ու ավելի են տարվում «հավերժական» թեմաներով՝ բնության, սիրո, մանկության վերհուշի հովվերգական խոհերով: Հետին պլան է մղվել հրապարակախոսական, քաղաքացիական պոեզիան և մոդայի իրավունք է ստացել սխալ հասկացված «սուբյեկտիվ լիրիկան, (...) հաճախ դժվար է որսալ ստեղծագործական անհատականությունը տարբեր բանաստեղծների երկերում»: Ելնելով գրականության գնահատության իր դավանած հիմնարար չափանիշներից՝ որպես «հիմնական թերություն» Սարինյանը նշում է նաև նկարագրականությունը, որ ոչնչացնում է պոեզիայի «խոհափիլիսոփայական ոգին»: Ավելին՝ համաշխարհային գործընթացներով պայմանավորված՝ առաջադրում է ոչ միայն ազգային, այլև համամարդկային բովանդակության անհրաժեշտության պահանջը, քանզի, ըստ նրա «... փոխվել է մարդը, նրա բովանդակությունը, նրա խոհերի ու ձգտումների դիապազոնը»: Մինչդեռ՝ «Մարդու այս ներքին հարստությունը իր ամբողջ էությամբ չի բացահայտվում արդի պոեզիայում»: Նշված սկզբունքային

հարցադրումների տեսանկյունից, անդրադառնալով նաև Պարույր Սևակի «Նորից քեզ հետ» ժողովածուին՝ Սարինյանն ընդգծում է, որ այն հատկանշվում է «զգացմունքների աղքատությամբ և բանաստեղծական պատկերի անորոշությամբ»: Ընդ որում՝ ընդունելով երիտասարդ բանաստեղծի տաղանդը՝ համոզմունք է հայտնում, որ նա առավել ևս չպետք է հրաժարվի «մեծ թեմատիկայից», տրվի «անպարփակ դեգերումների» և «մտացածին ու արտառոց փաստերի» գայթակղությանը: Ի տարբերություն Մահարու այն կարծիքի, թե «Նորարար է Սևակը, թարմ, զվարթ հանգերով ու վանկերով», Սարինյանը, ընդունելով հանդերձ Պ. Սևակի նորարարությունը հայ պոեզիայում («Այդ, իհարկե, ճիշտ է»,- գրում է նա), միաժամանակ արձանագրում է, թե «Նորից քեզ հետ» գրքում այդ բանի դրսևորումը անթերի չէ, Սևակի ժողովածուին բնորոշ է նաև «արհեստական հանգավորումն ու հարմարեցումը», հանգամանքներ, որոնք , գրականագետի կարծիքով, հիմք են տալիս եզրակացնելու, որ «այստեղ պոեզիա չկա, որ սա պոետական ստեղծագործություն չէ, այլ չափածոյախոսություն, փաստերի կապակցություն, որը կարելի է անվերջ շարունակել»:

Տասնամյակներ անց՝ 1995 թ., անդրադառնալով «Նորից քեզ հետ» ժողովածուի իր քննադատությանը[6], Ս. Սարինյանը նշում է, որ նրանում արտահայտված սկզբունքային մոտեցումների ստուգությունը հիմնված է եղել գիտական այն համոզմունքի վրա, որ բանաստեղծի ուղին պետք է դիտել «ներքին ինքնազարգացումի, ճգնաժամի ու հաղթահարման, որոնումների ու հայտնության դրամատիկ, հաճախ ողբերգական մաքառումների մեջ»: Էական համարելով նշել, որ 50-ական թվականների երկրորդ կեսին «առանձին և հատուկ հոդված» չի գրել ոչ «Նորից քեզ հետ» ժողովածուի և ոչ էլ առհասարակ Պարույր Սևա-

[6] **Սարինյան Ս.**, *Ի հեճուկս*, Երևան, «ԳԹ», 1995, թիվ 3:

կի մասին, նա ընդգծում է, որ այդ շրջանում հանդես է եկել ժամանակակից պոեզիայի վերաբերյալ մի շարք հոդվածներով («Պոեզիայի մեծ բովանդակության համար», «Ինչից պետք է խուսափել» և այլն), որոնցում արծարծվել են ավելի հիմնարար և խորքային հարցադրումներ: Մասնավորապես, «ընդհանրացնելով ժանրի գեղարվեստական փորձը», նկատել է, որ «նրանում տակավին չի հաղթահարված սխեմատիզմը, կենցաղագրական էմպիրիզմը, նկարագրականությունը, հասարակացումն ու սենտիմենտալ ինքներգությունը»: Ընդ որում, այդ ամենը ցուցադրելու համար անդրադարձել է ոչ միայն Սևակի, այլև Աշոտ Գրաշու, Սողոմոն Տարոնցու, Սարմենի, Էմինի, Կապուտիկյանի և ուրիշների ստեղծագործություններին: Ինչ վերաբերում է Պ. Սևակի ժողովածուի քննադատությանը, ապա իր տեսակետը հիմնավորելու համար Սարինյանը վկայակոչում է նաև «ականավոր քննադատ և Սևակի անհատականության երկրպագու» Ս. Աղաբաբյանի բնութագրումը «Նորից քեզ հետ» ժողովածուի կապակցությամբ. Սևակն ասում է, որ այդ արտահայտությամբ ակնարկում է իր «փախստական էության» վերադարձը, բայց իրականում էությունը դեռ փախստական էր: Գրքերում ավելի շատ էր հրապարակախոսությունը, քան բանաստեղծությունը, նկարագրայնությունը, քան վերլուծումը, ցուցադրումը, քան թափանցումը, իրականության հասարակացումը, քան խորացումը»[7]:

Ի վերջո, Ս. Սարինյանի եզրակացությունն այն էր, թե այդ շրջանում «Նորից քեզ հետ» ժողովածուի «Բնագրային խորազնին վերլուծությունն ինձ բերել է այն համոզման, որ քննադատական իմ վաղ դիտարկումները միանգամայն ստույգ էին...»: Իր ճշմարտացիությունը հիմնավորելու համար գրականագետը

---

[7] **Աղաբաբյան Ս.**, *Արդի հայ գրականության պատմություն*, հատոր 2, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1993, էջ 296:

մեկ անգամ ևս ընդգծում է գիտական իր հայացքների սկզբունքային բնույթը: «Թող այն տպավորությունը չստեղծվի, թե քննադատական իմ դիտողությունները հակված են չնչին իսկ ստվերագիծ դրոշմելու Սևակի բանաստեղծական կերտվածքի բարձր ներդաշնակությանը: Բնա՛վ,- գրում է նա:- Գրականության պատմաբանի համար դրանք ավելին չեն, քան տաղանդի ինքնակայացման մաքառումները խորհրդանշող «նյութի դիմադրության» անխուսափելի դրսևորումներ: Ընդհակառակը, արդի սևակագիտության գլխավոր թերությունն այն է, որ բանաստեղծի պոետական աշխարհը վերագրում է սոցիոլոգիական ոլորտին և քաղաքական հրապարակախոսության մեջ ներսուզում արվեստի փիլիսոփայականը, ուր նա ձգտում է մոլորակային արժեքի»:

Բանավեճը շարունակվում է նաև Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1959) պոեմի և «Մարդը ափի մեջ» (1963) ժողովածուի գնահատության առիթներով:

«Անլռելի զանգակատուն»-ը Պ. Սևակը սկսել էր գրել դեռ 1957 թվականին և Հայպետհրատին տպագրության էր հանձնել 1959-ին: Տպագրության ընթացքը որոշակի դժվարությունների էր հանդիպել: Այդ մասին մանրամասներ կան Պ. Սևակի՝ նույն թվականին Մոսկվայից Համո Սահյանին հասցեագրված, բայց նրա միջոցով Վահագն Դավթյանին ուղղված նամակում («Վահագին եմ դիմում՝ նամակս քեզ ուղարկելու միջոցով»)[8]:

Դժգոհելով, որ իր «Անլռելի զանգակատուն» պոեմը ՀԳՄ կուսժողովում (Գ. Հայրյանի կողմից) և Հայպետհրատում (գրախոս Հ. Սահյանի կողմից) դրական կարծիքների է արժանացել, և այդուհանդերձ, Վ. Դավթյանը այն «նորից կարծիքի» է տվել, այն էլ՝ Սերգեյ Սարինյանին, Սևակը կասկած է հայտնում վերջինիս արդարամտության վերաբերյալ, քանզի, ըստ նրա,

[8] **Պապիկյան Հովհ.**, *Իմ Պոետը*, Երևան, հեղ. հրատ., 2024, էջ 56–61:

հայտնի իրողություն էր, որ «Սերգեյ Սարինյանը Պարույր Սևակին բանաստեղծ չի ճանաչում»: Եվ դա այն դեպքում, երբ իմացել էր, որ գրախոսի կարծիքն ընդհանուր առմամբ դրական էր, նույնիսկ՝ «պոեմի մասին ասել է բաներ, որ կշռյեին ամեն մի բանաստեղծի»: Այնուամենայնիվ, գրում է, թե հումորով է վերաբերվում այդ փաստին, քանի որ չի կարող ընդունել իրեն բնութագրելու կոչված **հանգաբան**, ինչպես նաև պոեմին վերաբերող **բռնահանգ** որակումները: Մասնավորապես, վերջինի վերաբերյալ գրում է, թե «հայոց բառապաշարի ամեն բառ կարող է ինձ առնչվել, բայց ոչ «բռնահանգը»: Վերջապես, համոզված էր, որ հանգավորման հարցը չի կարող հիմնավոր չափանիշ լինել գրական գործը գնահատելու համար: «...Մի բոպե ընդունենք, որ Սերգեյը ճիշտ է, այսինքն իմ հանգավորումը նրա սրտով չէ,- եզրափակում է նա:-Լա՛վ: Էդ որ օրվանից են հանգավորման մետրով գրականություն չափում ու ձևում»:

Պարույր Սևակի պոեզիայի գնահատությանը Ս. Սարինյանն անդրադառնում է նաև մեկ տարի անց՝ 1960 թվականին՝ «Ինչից պետք է խուսափել»[9] հրապարակման մեջ: Գրական մամուլում և ասուլիսներում ընթացող բանավեճի հիմնական թեությունը համարելով «գրականության գաղափարական կողմի առաջնային գործոնի» շրջանցումն ու «զուտ ձևական, արտաքին երևույթների» կարևորումը, որը «տանում է դեպի բովանդակության աղքատություն, ֆորմալիստական հրապուրանք»՝ նա այն տեսակետն է հայտնում, որ «պոետական նոր ձևերի որոնման մեջ» առավել ակտիվ Ս. Կապուտիկյանից, Գ. Էմինից և Պ. Սևակից «միայն Ս. Կապուտիկյանն է, որ կարողանում է որոշ չափով պահպանել ձևի և բովանդակության միասնությունը: Ինչ վերաբերում է Գ. Էմինին ու Պ. Սևակին, ապա հենց նրանց մոտ է, որ երևան է գալիս այդ երկու կողմերի խզումը և

[9] **Սարինյան Ս.**, *Ինչից պետք է խուսափել*, Երևան, «ԳԹ», 1960, թիվ 30:

հաճախ պոեզիան հանգեցնում փակուղու»: Ընդունելով, մինչև անգամ անվիճելի համարելով, որ «Էմինը և Սևակը որոնող բանաստեղծներ են և որ պոետական ձևերի, մտահղացումների թարմությամբ նրանք հարստացրել են սովետահայ պոեզիան», Սարինյանը կարևոր է համարում նաև հարցը, թե «համակողմանիորեն ներդաշնա՞կ է այդ «նորը», արդյոք այն չունի՞ ստվերներ, որոնք անհամատեղելի են բարձր պոեզիայի հետ»: Գ. Էմինի «Նոր ճանապարհ» (1950) և «Մինչև այսօր» (1959) գրքերի առիթով, նա հաստատում է, թե «Մենք հաճախ շատ ենք արդարացնում որոշ գրողների՝ որոնումի անվան տակ»: Մինչդեռ, ստույգն այն է, որ ըստ գրականագետի՝ «Որոնողը պետք է նաև գտնի, այլապես այն զրկվում է հենց իր իմաստից: Երկրաբանին չեն խրախուսում սոսկ որոնելու համար, այլ թե ի՛նչ է նա հայտնաբերում»: Այդ իմաստով Սարինյանը «շատ վիճելի» է համարում նաև Պ. Սևակի «գրական ոճի հարցը»՝ նշելով, որ «ուժեղ կողմերի» կողքին առկա նաև «լուրջ ստվերները», որդեգրած «գրական մասերան»՝ դրսևորվելով բանաստեղծի «հենց առաջին նախափորձերում, հետևողականորեն ուղեկցել է նրա ստեղծագործության ընթացքին՝ հասնելով մինչև «Անլռելի զանգակատուն» պոեմը»:

Հատկանշական է, սակայն, որ այս հրապարակման մեջ արդեն որոշակիորեն նկատելի է Պարույր Սևակի ստեղծագործական անհատականության գնահատման մեջ **դրական-բացասական հատկանիշներում առավելապես դրականի շեշտադրման իրողությունը**: «Անտարակույս «Անլռելի զանգակատունը» Պ. Սևակի բանաստեղծական տաղանդի ամենացայտուն արտահայտությունն է, որն իր ուրույն տեղը կունենա հայ պոեզիայի պատմության մեջ,- գրում է Սարինյանը:- Մեծ տաղանդի մի երկ է դա, ուր բանաստեղծական վերացությունը, պատկերների հորդումը, բառերի տարափն ու տարերքի հասնող ռիթմը տեղ-

տեղ ուղղակի հիշեցնում են Նարեկացուն»: Նշելով նաև Պ. Սևակի բանաստեղծական երևակայության «շռայլությունը», «ինտելեկտուալ հարստությունը», որ նա «հիանալիորեն զուգակցել է պատկերների պոետիկական հրապույրին և հասել բանաստեղծական զգացմունքի զարմանալի ներհունության»՝ այդ միասնության մեջ՝ «ներշնչման հորդաբուխությունը», «անկաշկանդությունը», նաև «բառի հարստությունը, պատկերների անակնկալ», երբեմն «ապշեցուցիչ» հայտնագործումը, այդուհանդերձ, Սարինյանն անհրաժեշտ է համարում նաև աչք չփակել «ստվերների» վրա, քանզի, ըստ նրա՝ «Անլռելի զանգակատունը» ի հայտ է բերում մի տարօրինակ պարադոքս, ուր ամենուրեք հոյակապ պոեզիան համախառնված է սովորական հանգաբանությանը. «...պոեմի ուժեղ տողը հոյակապ է աներևակայելիության չափ, բայց թույլն էլ տարտամ է անհավանականության աստիճանի»: Այդ երևույթը համարելով ոչ թե «պատահական վրիպում», «անցողիկ իրողություն», այլ «բանաստեղծական արվեստի գիտակցված սկզբունք»՝ նշում է, որ «այս է մեր բանավեճի դրդապատճառը»: Գրականագետի համոզմամբ, «Ստեղծագործական բնավորությամբ լինելով որոնող, Պ. Սևակը հորինել է բանաստեղծական պատկերի ու բառի իր ինքնօրինակ էսթետիկան», որի գեղարվեստական հնարավորությունները խիստ կասկածելի են: Դա էապես մաներայնությանը եզրահանգվող սովորական ֆորմալիզմ է, որն ուղղակի ցույց է տալիս թեթև բռնահանգի ու բառախաղության իր ներքին հակումը»: Ըստ նրա՝ «Հանգաբանական այս հակումը մի տեսակ յուրահատուկ է դարձել Պ. Սևակի բանաստեղծական ինտուիցիային, և սա է վատը: Նա գտնում է միայն առաջին տողը, իսկ հաջորդն արդեն չի իմաստավորում, այլ հնարագիտակցորեն բխեցնում է նախորդ հանգի հնչյունային ասոցիացիայից»: Սարինյանն արտառոց է համարում հենց այն, որ «Պ. Սևա-

կը միտում է ցուցաբերում «նոր ձևի» արտահայտություն համարելու հենց այդպիսի տողերը, ինչը, ըստ նրա, «ուղղակի մոլորություն է»: Գրականագետի կարծիքով, «Պ. Սևակը պետք է խլացնի այդ խորթ բեկբեկումները և այն ժամանակ էլ ավելի հոյակապ կինչի բանաստեղծական կարողությունների նրա սիմֆոնիան»:

Գրականագիտական նշված մոտեցումները՝ Պ. Սևակի ստեղծագործական նոր ձեռքբերումներին համընթաց, ավելի ու ավելի հիմնավոր են դառնում հետագա տասնամյակներին Սարինյանի հրապարակած հետազոտություններում: 1963 թ. լույս տեսած «Մարդը ափի մեջ» ժողովածուն ամիսներ անց՝ 1964 թ. փետրվարի 15-ին, լուրջ քննարկման է ենթարկվում Գրողների միությունում, իսկ դրանից մեկ ամիս հետո կայացած ՀԳՄ վարչության պլենումում՝ «Մեր ժամանակը և արտացոլումը գրականության մեջ» օրակարգով, լսվում է հենց Ս. Սարինյանի զեկուցումը՝ «Պոեզիան մեծ ճանապարհի վրա»[10]: Տասնամյակներ անց, հետադարձ հայացքով անդրադառնալով այդ շրջանին, գրականագետը նշում է, թե «Իրականում գրական շարժման առանցքում դրված էր Պարույր Սևակի նորարարական փորձի գեղագիտական ընտրության խնդիրը, այնպես որ ես խորապես գիտակցում էի իմ զեկուցման նշանակետն ու գրական մթնոլորտի արձագանքը»: Նրա գնահատմամբ, «**Այս քննության մեջ է, որ շրջադարձ նշանավորվեց սևակագիտության ասպարեզում**՝ փոխակերպելով նրա բանաստեղծության պոետիկայի բանաձևերը, ընկալման ռիթմն ու արժեքայնության չափանիշները (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[11]:

Հիշյալ զեկուցման մեջ, քննելով անցած վերջին տասնամյակի ընթացքում մասնավորապես պոեզիայի վիճակն ու զար-

---

[10] **Սարինյան Ս.**, *«Պոեզիան մեծ ճանապարհի վրա»*, Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 77–118:

[11] **Սարինյան Ս.**, *«Ի հեճուկս»*, Երևան, «ԳԹ», 1995, թիվ 3:

գացման միտումները, գրականագետը նկատում է, որ 50-ականի կեսերին ունեցած որոշակի վերելքից հետո, այն առանձնապես աչքի չի ընկնում զգալի տեղաշարժերով, «ի հայտ չի գալիս մեծ անհատականությունը», «Չարենցը դեռևս չի հաղթահարված ո՛չ միայն ստեղծագործաբար, այլև տեսականորեն, մենք չենք ընկալել այն ամբողջ հարստությունը, որ ավանդել է մեզ հանճարեղ բանաստեղծը», «ի վերջո, նույն պոեզիան է, կամերային նույն երգը: (...) Նկատելի չէ՞ արդյոք, որ մեր բանաստեղծները շատ են անխառն, միագիծ, զտված»[12]: Ընդհանուր այդ պատկերի մեջ, սակայն, գրականագետի կարծիքով, Պ. Սևակն առանձնանում է «իր ոճի և բանաստեղծական մտածողության յուրահատկությամբ, ամենից ավելի է ձգտում խախտել բանաստեղծական ինքնաբավության ներքին հաշտարարությունը և ցուցադրել հակադիր միտումներ: Հիրավի, Սևակը ներքուստ հաշտ չէ և հաշտ չի եղել երբեք»: Հետադարձ հայացք նետելով անցած շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում բանաստեղծի տպագրած գործերի գնահատությանը՝ նա նշում է, որ դրանք «նորից հաստատեցին Սևակի ինքնատիպ տաղանդը, բայց և լիապես չլուծեցին նրա ոճի փիլիսոփայության առեղծվածը: Այս անգամ որպես փաստ և իրողություն Պարույր Սևակը դրվեց տեսակետների քննական ստուգության առաջ: Կարծիքները բաժանվում էին սկզբունքային հարցում. ոմանք կասկածի տակ էին առնում բանաստեղծի ոճը, մյուսները ընդունում էին այն, բայց մի բան մնում էր անկասկած՝ մեծ ու անսովոր տաղանդի ապագա խոստումները»: Ակնհայտ է, որ նման տեսակետը վկայում է այն իրողության մասին, որ, ըստ էության**, Սարինյանի քննադատության խստությունը ևս պայմանավորված էր տաղանդավոր Սևակի նկատմամբ ունեցած մեծ հավատով:** Ընդ որում, հատկանշական է նաև երկու անհատակա-

[12] **Սարինյան Ս.**, *«Պոեզիան մեծ ճանապարհի վրա»*, էջ 78, 80:

նությունների խառնվածքների նմանությունը, ինչը կարևոր է նրանց ներքին փոխըմբռնման կայացման համար: Ս. Սարինյանը բազմաթիվ առիթներով շեշտել է, որ «Ինքը՝ բանաստեղծը, ազատ չէր ներքին հակասությունների ու կասկածների զգացումից: Նրա անհանգիստ խառնվածքը անապի դեգերումների է ընդառաջում, փորձելով պարադոքսների ծայրահեղ բևեռների վրա լուծել պոեզիայի կամ-կամի հարցը, հաճախ վերապրելով ներքին օտարման ու հրաժարումի երկյուղը»[13], ինչը, թերևս, լրացուցիչ կերպով բարդացնում էր քննադատության՝ նրան ճիշտ ընկալելու և մեկնաբանելու խնդիրը: Արձագանքելով գրական-գիտական որոշ շրջանակներում Սերգեյ Սարինյանի մտածողությունն ու ոճը բարդ համարելու տեսակետին՝ Պ. Սևակը, կարծում ենք, ավելի ճշգրիտ էր, երբ «ի ծնե ակադեմիկոս-գրականագետի» (Հր. Մաթևոսյան) մտածողության եղանակը որակում էր՝ «ըստ հարկի **բարդ, բայց ոչ երբեք խրթին** (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»՝ ընդգծելով նաև նրա հայացքի թափանցողությունն ու խորքը՝ «Ոմանք (ըստ ծանոթ առածի) ծառերի ետևում չեն տեսնում անտառը, իսկ Սարինյանը գերազանց **անտառատես** է (...) զարմանալի սուր է տեսնում հեռվից, նախանձելի ընդգրկումով է առնում խոշորն ու ամբողջականը, համընդհանուրն ու էականը»[14]:

Նշված զեկուցման մեջ արդեն առավել որոշակի են արտահայտվում Սարինյանի դրական, բարձր գնահատականները Պ. Սևակի ստեղծագործական ինքնատիպության նոր դրսևորումների վերաբերյալ: «Թերևս անակնկալ չէր, բայց և դժվար էր երևակայել այն մեծ թռիչքը, որ ունեցավ Պարույր Սևակը հաջորդ տասնամյակում,- արձանագրում է նա: - Ներքին կարողությունների բացահայտման մի շրջան էր դա, որ ամբողջ

---

[13] Նույն տեղում, էջ 81:

[14] **Սևակ Պ.,** *Հայկական ռոմանտիզմը և իր մեկնաբանը*, Երևան, «Սովետական Հայաստան» հրատ., 1966, թիվ 284:

լիությամբ ցուցադրեց բանաստեղծի տաղանդի հնարավորությունները և ուրույն տեղ հատկացրեց նրան հայ պոեզիայի պատմության մեջ»: «Անլռելի զանգակատուն»-ը, ըստ նրա, «գրական մի իսկական գլուխգործոց» է, «որ իր հղացմամբ, կառուցվածքով գեղարվեստական հայտնություն էր ժանրի պատմության մեջ»: Իսկ «Մարդը ափի մեջ» ժողովածուի մասին գրում է, թե «Վաղուց ի վեր մեզանում բանաստեղծական ոչ մի երևույթ այդչափ հետաքրքրություն չէր հարուցել, այդչափ չէր շարժել գրական կյանքը»[15]: Գրականագետը նշում է, թե նախ՝ անհնար է ընդգրկել նրա «բովանդակությունն ու պատկերացնել նրա սահմանները, (...) որովհետև նա չունի ներքին միագծություն»: Պարույր Սևակի բանաստեղծական ինտոնացիային հատուկ համարելով «զարմանալի զգայնություն»-ը՝ նշում է, որ բանաստեղծը «նկատում, տեսնում, հայտնաբերում է անհավանականը, անորսալին», իսկ առավել զարմանալին «կյանքի հարուստ փաստերը պոետականացնելու շռայլ կարողությունն է»: Ըստ նրա՝ շարքում բազմաթիվ բանաստեղծություններ «զարմանք են հարուցում բանաստեղծական **ներքնատեսությամբ,** պոեզիան անեզր տարածությունների վրա զբաղեցնելու ազատությամբ (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[16], «Մարդուն առնելով իր ափի մեջ, բանաստեղծը թափանցում է նրա հոգու խորքը, քրքրում նրա էությունը, որպեսզի անտես չթողնի մատնող ոչ մի գալարում: Նա մարդու շահախնդրությունները դուրս է բերում իր եսի սահմանական հետաքրքրություններից և չափում այն կյանքի մեծ շարժումներով, այրում այն ամենը, ինչ մանր է, չնչին, կաշկանդող և վեհացնում բարձրն ու մարդկայինը: Ճիշտ ապրելու մաքառումն է պոետականացնում Սևակը»[17]: Վերջապես, «բացառելով նկարագրությունը և հանդես գալով որպես

---

[15] **Սարինյան Ս.**, *«Պոեզիան մեծ ճանապարհի վրա»*, էջ 82:
[16] Նույն տեղում, էջ 98:
[17] Նույն տեղում, էջ 106:

վերլուծող և փիլիսոփա, Պարույր Սևակը հասնում է դասական բանաստեղծության այն մեծ հայտնությանը, որը կոչվում է պատմողականություն, և որը առերևույթ հասարակ թվալով, էապես մեծ տաղանդների բացառիկ տրվածքն է»[18]:

Որպես կարևորագույն հատկանիշներ, նշվում են նաև Պ. Սևակի պոեզիայի բազմաձայնությունը, որով «նրա բովանդակությունը եզակի զգացումի արտահայտություն չէ, այլ ապրումների սինթեզ, կապակցությունների հանգույց, զեղումների համադրություն», զգացմունքի, տրամադրության շաժումը, դիալեկտիկան, «կոնկրետ-իրականի և կոնկրետ-զգացականի» համադրումը «համամարդկային խոհերի հետ», որով «նրա պոեզիան հասնում է զարմանալի խորության ու երևակայության անակնկալ թռիչքների»: Ս. Սարինյանն ընդգծում է Պ. Սևակի նորարարությունը նաև բանաստեղծական ձևի ու ոճի, ընդհանուր կառուցվածքի ոլորտներում: Ըստ նրա՝ դրույթի և հակադրույթի հանգուցում-համադրումների արդյունքում «նոր խոհեր ու հարցումներ են ծագում, որոնք մտքի ու երևակայության հզոր տարերքով բացում են փիլիսոփայական թափանցումների անափ հորիզոններ»[19]: Նշվում է, որ «կյանքի սոցիալական ու էթիկական իրողությունների խորազնին վերլուծության» միասնության մեջ էլ պիտի որոնել «նրա բանաստեղծական մտածողության գեղարվեստական կառուցվածքը»[20]:

Ինչ վերաբերում է ոճական յուրահատկություններին, ապա հիշեցնելով, որ «քիչ չեն կշտամբել Պարույր Սևակին չափի զգացումը երկարաբան մեղանչումին ու ավելորդաբան գայթանքին ենթարկելու համար» (մի բան, որ նշել էր նաև ինքը Սևակի առաջին ժողովածուների կապակցությամբ), տարիներ անց, սակայն, հատկապես «Մարդը ափի մեջ» գրքից հետո,

[18] Նույն տեղում, էջ 109:
[19] Նույն տեղում, էջ 99–101:
[20] Նույն տեղում, էջ 109:

գրականագետը, ըստ էության, սրբագրելով նաև իրեն, արձանագրում է, թե «դա կանխակալ տպավորություն է միայն, որը նույնքան անհամատեղելի է տեսական ստուգության հետ, որքան տարակուսանքը՝ տերյանական ստանդարտի հանդեպ: Բոլոր դեպքերում ձևի ու կառուցվածքի որոշիչը բովանդակության ավարտվածությունն է, իսկ գեղարվեստական լուծումը՝ ոճի ու մտածողության անհատական ենթակայությունը»: Վերջապես ընդգծվում է, որ Սևակի պոեզիան հատկանշվում է նաև բառապաշարի հարստությամբ. «... Կարելի է հեշտությամբ նկատել, որ նա պոեզիայի բնագավառն է բերում հին ու նոր բառեր, բառակապակցություններ, դիմում բառաստեղծումների, գտնում բառի իմաստային նոր երանգներ»[21]:

Այդ դեպքում, սակայն, ի՞նչն էր մինչ այդ բռնկված բանավեճերի պատճառը, շարժառիթը: Ըստ գրականագետի՝ բանն այն է, որ, ճիշտ է, Պ. Սևակի «պոետիկան շատ կողմերով կասկածի տակ էր առնվում, բայց նրա տաղանդը ճանաչում ուներ, և հանդուրժում էին ամեն բան, որպես թե նա դեռ իրենը կասի: «Անլռելի զանգակատուն»-ը լիապես գոհացում տվեց այդ սպասումին»: Իսկ երբ լույս տեսավ «Մարդը ափի մեջ» գիրքը, «ակնհայտ դարձավ, որ նրա ինչ-ինչ ձևերը **բնավ էլ վրիպումներ չեն**, այլ գեղագիտական համառ ըմբռնումներ, և այդ ժամանակ էլ հարցը ստացավ տեսական նշանակություն ու առիթ տվեց սկզբունքային բանավեճի (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[22]:

Գնահատելով 1958–1964 թթ. Պ. Սևակի ստեղծագործության՝ Գ. Մահարու հետազոտական մեթոդը՝ Սարինյանը նշում է, որ «Դա նեղ հնարավորությունների այն «ժանրն» է, որը ընդունակ չէ մեծ ընդհանրացումների...»[23]: Բացի այդ, «ռացիոնալիզմը ներկայանում է որպես Պարույր Սևակի ստեղծագործությունը

[21] Նույն տեղում, էջ 114:
[22] Նույն տեղում, էջ 82–83:
[23] Նույն տեղում, էջ 86:

գնահատելու չափանիշ...»: Նա ենթադրում է, սակայն, որ «այստեղ պարզապես ինտելեկտուալիզմը շփոթվել կամ նույնացվել է ռացիոնալիզմին, իսկ դրանք էապես տարբեր հասկացություններ են»: Սխալ համարելով առհասարակ քննադատության մեջ նկատելի մերժողական մոտեցումը ինտելեկտուալիզմի նկատմամբ, որպես թե այն «պոեզիան կտրում է զգացական վերապրումներից և նետում տրամաբանական դատողությունների ոլորտը», Սարինյանը նշում է, թե «Հենց այս մտայնությանն է տուրք տալիս Մահարին՝ Սևակի պոեզիայի գնահատության հարցում, ստիպելով իրեն դրույթն ապացուցելու համար վկայակոչելու այն, ինչը «Մարդը ափի մեջ» գրքում արդեն հաղթահարված է, և ինչը հանդես է գալիս միայն որպես անցողիկ նախապաշարմունք»: Մինչդեռ իր՝ Սարինյանի մոտեցումն ավելի ընդհանրականի, **տեսականի** կողմն է, ըստ որի՝ թեև առանձին «մեղանչումներ կարելի է գտնել «Մարդը ափի մեջ» գրքի ինչ-ինչ տողերում, սակայն դրանք սոսկ մնացուկներ են, ոճական ինչ-ինչ նախասիրությունների հետքեր, իսկ **իր ամբողջության մեջ նոր ժողովածուն գեղարվեստական փայլուն հաղթանակ է, որ ժամանակակից հայ պոեզիան մղում է դեպի դասական բարձունքներ** (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[24]:

Ս. Սարինյանի համոզմունքն այն է, որ գրականագիտությունն ու քննադատությունը կոչված են հայտաբերելու գրական երևույթի «փիլիսոփայական իմաստը» և ոչ թե զարմացնելու հոգեբանական վերլուծություններ անելու, կամ «պատկեր-էպիտետներ քաղելու հնարամտությամբ...»: Հակառակի կողմնակիցները պարզապես «գրականագիտական սոցիոլոգիզմը փոխարինում են էսթետիզմով»: «Բայց ի՞նչ է տալիս այդ անճարակ «էսթետիզմը»,- տարակուսում է նա,- գեթ կարողանո՞ւմ է տեղադրել Պարույր Սևակին հայ պոեզիայի զարգացման շղթա-

[24] Նույն տեղում, էջ 89–90:

յում»: Նրա համոզմամբ, իհարկե ոչ: «Այլապես ասպարեզ չէր ունենա այն արտառոց պնդումը, թե Պարույր Սևակը քանդում է հայ պոեզիայի ազգային ավանդները, թե ապարդյուն են «ինքնատիպության» նրա ճիգերը, քանի որ ճշմարիտն այն է, ինչ հավիտենական է և ինչ հաստատվել է պապերի փորձով»: Այս մոտեցման մեջ ցայտունորեն ընդգծվում է այն իրողությունը, որ Սարինյան գրականագետի տեսական մտածողության համակարգում առաջնային կարևորություն ունի գրականության փիլիսոփայական և գիտական հիմքերի, ժամանակի մտածողության հետ գրականության սերտ կապի բացահայտումը: Իսկ դա գրական երևույթների գնահատության մեջ ենթադրում է որոշակի դինամիկ ընթացք և ոչ թե քարացած պատկերացումների տեղապտույտ: Մի բան, որ ավելիով գրականագետը նկատում և բացահայտում է Պ. Սևակի անհատականության և ստեղծագործության մեջ: «Պարույր Սևակի գեղագիտական հավատամքն այլ է,- գրում է Սարինյանը,- նա հավիտենական օրենքներ չի ընդունում՝ «Օրենքներ չկան, կա լոկ իրավունք...»: Նրա համար չկա հաստատում, այլ լոկ որոնում»: Ահա թե ինչու, «Պարույր Սևակը ոչ միայն միտում չունի բացառելու հայ ազգային պոեզիայի ավանդները, այլև իր ստեղծագործությամբ, թերևս ավելի լայն ու համակողմանի է իրացնում հայ դասական պոեզիայի գեղարվեստական ավանդույթները, քան ժամանակակից բանաստեղծներից որևէ մեկը»: Ըստ այդմ, նա նշում է, որ Պ. Սևակի պոեզիայում զգացվում է «Նարեկացու և Թումանյանի, Սիամանթոյի և Վարուժանի բանաստեղծական շունչը», Սևակն այն բանաստեղծն է, ով «փորձում է հայ պոեզիային վերադարձնել այն համապարփակ մասշտաբները, ներշնչման այն թափն ու նորարարական այն մղումը, որպիսին յուրահատուկ էր Չարենցի ստեղծագործությանը»: Վերջապես՝ «Սևակի ստեղծագործության պատմական նշանակությունը հենց այն է, որ վերա-

կանգնում է այն խզումը, վերադարձնում է այն կորուստները, որ ունեցավ հայ պոեզիան Չարենցից հետո»: Մյուս կողմից, սակայն, «Սևակի համար արժեքների գնահատությունը չի նույնանում այն կրկնելու հետ»: Նրա ստեղծագործական մտածողության համակարգում սկզբունքային իմաստ է ստանում նաև «ազգային ավանդների և գեղարվեստական զարգացման համաշխարհային ընթացքի հարաբերակցության հարցը», մի հարց, որը, ըստ Սարինյանի, «կարող է մտահոգել միայն մեծ անհատականություններին և որն իրավասու են լուծելու միայն մեծ անհատականությունները»: Ի վերջո, ընդհանրացնելով ասվածը, գրականագետը եզրակացնում է, որ Պարույր Սևակը «որոնում է ժամանակակից պոեզիա, դարաշրջանի ռիթմն զգացող պոեզիա, ինտելեկտուալ պոեզիա, որը գիտելիքները ի սպաս է դնում բանաստեղծությանը, իսկ վերլուծությունը՝ զգացմունքի ծառայությանը: Դա թերևս ենթադրում է զգացմունքի միագծությունից դեպի աշխարհի պոլիֆոնիկ ընկալումներ, պարզությունից դեպի բարդն ու հանելուկայինը, բայց դա այն է, ինչը տանում է դեպի մեծ պոեզիան և ինչը կարող է հայ պոեզիան մղել դեպի համաշխարհային բարձունքներ»[25]:

Ի դեպ, Սարինյանի այդ զեկուցումը ժամանակին չի տպագրվել: «Իսկ ինչո՞ւ չտպագրվեց իմ հոդվածը,- տասնամյակներ անց, անդրադառնալով այդ հարցին, գրում է նա,-ինչո՞ւ այն ամիսներ շարունակ մնաց «Սովետական գրականություն» հանդեսի խմբագրի դարակում, հեղինակի հետամտումները կանխելով կտրուկ պայմանով՝ կա՛մ կրճատել երկու երրորդով և սրբագրել այն հատվածները, որոնք Պարույրին «անջատում են» բանաստեղծների ընդհանուր շղթայից, կամ...»: Հարցը, բնականաբար, հոետորական էր, քանզի պատասխանն ավելի քան ակնհայտ էր: Եվ Սարինյանը դարձյալ հարկ է համարում ձևա-

[25] Նույն տեղում, էջ 92–95:

կերպելու գրողի ու գրական երկի գնահատության իր հիմնական սկզբունքը. «Վերապահություն չունեմ գրողների անձնական կյանքի ու փոխհարաբերությունների բանասիրական հետազոտության հանդեպ: Բայց դրա արգասավորությունը ճանաչում եմ **գրականագիտական մակարդակի վրա, երբ ուսումնասիրությունն ուղղվում է գրական- պատմական երևույթի գիտական լուսաբանության նպատակին**»: Եվ ապա՝ ավելի ընդհանուր ձևակերպմամբ՝ «Անցյալի վրա դատավճիռ կարդալը դյուրին զբաղմունք է, **դժվարն իր ժամանակն ստեղծելն է** (ընդգծումները մերն են – Պ.Դ.)»[26]:

***Ստեղծագործական անհատականության ձևավորման ընթացքը***

70-ականների կեսերին ունեցած հրապարակումներում՝ մասնավորապես «Պարույր Սևակի ստեղծագործությունը»[27] հետազոտության մեջ, Սարինյանն անդրադառնում է **Պ. Սևակի ստեղծագործական անհատականության ձևավորման և զարգացման** քննությանը, ընդ որում՝ հիմնվելով նաև բանաստեղծի ինքնախոստովանություն -ինքնաբացահայտումների վրա: Նշելով, որ պատանու մեջ «ներաշխարհային ձգտումների որոնումները» սկսվում են պատերազմական առաջին տարիներից, Սարինյանը վկայակոչում է Սևակի՝ այդ առումով «բացառիկ արժեք» ներկայացնող նամակը Հովհ. Ղազարյանին (1942 թ. 6 օգոստոս): «Ըստ էության դա մի ծրագիր է, որ զարմանք է պատճառում ոչ միայն տասնութամյա պատանու համար անսովոր (...) հասունությամբ, այլև մտքի փիլիսոփայական լիցքով, գեղագիտական ու գրական-պատմական ըմբռնումների ավարտվածությամբ, պոեզիայի ազգային ու համամարդկային

---

[26] **Սարինյան Ս.**, *«Ի հեճուկս»*, Երևան, «ԳԹ», 1995, թիվ 3:

[27] **Սարինյան Ս.**, *«Պարույր Սևակի ստեղծագործությունը»*, Պարույր Սևակ (Բանաստեղծության գիտությունը), Երևան, «Հայաստան» հրատ., 2006, էջ 59–83:

սահմանագծերի, հայ և համաշխարհային դասականների ստեղծագործության գեղագիտական արժեքի խոր և ինքնատիպ դիտարկումներով»,- գրում է նա: Խոստովանելով Դոստոևսկու հետ իր ներքին հարազատությունը՝ Սևակը դա հիմնավորում էր նրանով, թե «սա հենց այն է, ինչ որ կյանքը՝ խառնիխուռն, վայրի, անդադաս, անկարգ: Բայց այդ անկարգության մեջ կա մի ներքին ամենախիստ կապով իրար աղերսված կարգավորություն: Այդ իսկական կյանքն է - արտաքինից անտակտ, ներքուստ սակայն ամեն մի չնչին մանրամասնով իրար հետ պայմանավորված»[28]: «Այստեղ է Պարույր Սևակը,- ազդարարում է Սարինյանը,- և հետաքրքրական է, թե, **տակավին խանձարուրի մեջ, բանաստեղծի ներքնատեսությունն ինչպես է ճանաչում իրեն,** հայտնաբերում իր խառնվածքի բաղադրությունը (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»[29]:

Պ. Սևակի բանաստեղծական անհատականության ձևավորման ընթացքի լուսաբանման տեսակետից, Սարինյանն ընդգծում է նաև 1945 թվականին՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետն ավարտելու կապակցությամբ, նրա հեղինակած «Վարուժանի պոեզիան» դիպլոմային աշխատանքը: Գրականագետի կարծիքով «տիպաբանական հմուտ վերլուծության այդ հազվագյուտ փորձը», ներհյուսված լինելով «պոեզիայի առանձնահատկությունների և բանաստեղծի կոչման վերաբերյալ տեսական դրույթներով, միաժամանակ **ինքնավերլուծում է**, անդրադարձված ինքնաճանաչում (ընդգծումները մերն են – Պ.Դ.)»: Մեջբերելով բանաստեղծի ձևակերպումը, թե «Յուրաքանչյուր բանաստեղծ, յուրաքանչյուր իսկական բանաստեղծ ինքնին ներփակ մի ամբողջություն է, ինքն իր մեջ յուրահատուկ մի աշ-

---

[28] **Սևակ Պ.,** *Երկեր 3 հատորով,* հատոր 3, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 553:

[29] **Սարինյան Ս.**, *«Պարույր Սևակի ստեղծագործությունը»,* Պարույր Սևակ (Բանաստեղծության գիտությունը), 2006, էջ 60:

խարհ, որտեղ առերևույթ չպայմանավորված, ավելորդ կամ պատահական թվացող ամեն մի երևույթ, ըստ էության, սերտորեն առնչված է այդ յուրօրինակ աշխարհին և գործում է նրան հատուկ օրենքներով»[30], Սարինյանը եզրակացնում է. «Սա ստեղծագործական պրոցեսի օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների այն միասնությունն է, որով ինքնորոշվում է գրողի անհատականությունը»[31]:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո սկսվում է բանաստեղծի ներքին զարգացման նոր փուլը: Նրա արդեն խաղաղված «հոգու դեգերումները տեղի էին տվել գաղափարական նվիրումին, և նա քաղաքացիական խանդով արձագանքում է ժամանակի ձայնին: Ներքին մաքառումները լուծվում են գալիքի հանդեպ պայծառ հավատով»: Սակայն «Տիպաբանական վերլուծությունը ցույց է տալիս,- արձանագրում է Սարինյանը,- որ «Անմահները հրամայում են» (1948) և «Սիրո ճանապարհը» (1954) ժողովածուներում Պարույր Սևակը չլուծեց **բանաստեղծական սիմֆոնիզմի** գեղագիտական այն ծրագիրը, որ առաջադրում էր իր հանգանակներում (ընդգծումը մերն է – Պ.Դ.)»: Ըստ նրա՝ «Կար գաղափարը, կարծես թե գտնված էր նաև արտահայտության ձևը, բայց, երևի, դեռ պակասում էր գրական ազդեցություններից պոկվելու «թռիչքի ահագնության» էներգիան»[32]: Մի բան, որ չափազանց էական նշանաձողերից էր նաև Սևակի համար: «Անշուշտ, անտարակուսելի է, որ ես բանաստեղծ եմ,- խոստովանել է նա,- (...) Այդ մի հանգամանք, մի առաջնային, բայց տվյալ դեպքում խնդրից դուրս հանգամանք է: Երկրորդ հանգամանքը հարվածի ահագնության և այն դեպի ո՞ւր ուղղելու հարցն է: Այդ է հարցերի հարցը ինձ համար

---

[30] **Սևակ Պ.,** *Երկեր 3 հատորով,* հատոր 3, էջ 471:
[31] **Սարինյան Ս.**, *«Պարույր Սևակի ստեղծագործությունը»*, էջ 62:
[32] Նույն տեղում, էջ 63:

այժմ»[33]: «Բնության բացառիկ ընտրյալները միայն կարող են այսքան անկեղծ լինել,- գրում է Սարինյանը,- այսպես գիտակցել իրենց կոչումը և ունկնդիր լինել առաքելության խորհրդին»[34]:

Նշված տարիների վերաբերյալ Սարինյանը նշում է նաև Սևակի մտածողության մեջ «ստեղծագործական հեռանկարի ծրագրվածությունը», որի իրականացումները, ըստ նրա, «որոշակիորեն միտված էին պոեզիայի հնարավորություններն ու ֆունկցիոնալ սահմաններն ընդլայնելու անհրաժեշտությամբ»: Այդ եզրակացությունը հիմնված էր Սևակի այն նպատակադրումների վրա, թե «Այստեղ իմ մոտիվները կլինեն միջազգային և իմ հորիզոնը կլինի համաշխարհը: Ոչ մի սահմանափակություն: Ինձ առաջին հերթին կհետաքրքրի համայն աշխարհի բախտը, որն ինձ կթվա մի չնչին գնդակ տիեզերական հաստատության մեջ, մարդկանց բախտը, որպես չնչին և դժբախտ արարածների: Կարծես երկրի վրա կատարվող անցուդարձին կնայեմ վերերկրային ինչ-որ տեղից, ինչ-որ Մարսից կամ Սատուրնից»[35]: Թեև Սարինյանը նշում է, որ՝ «Այս մտահղացումը, իհարկե, չիրականացրեց բանաստեղծը և այն, ինչպես ինքն էր գուշակում մնաց որպես «գեղեցիկ երազ», սակայն նա քննելով նաև Սևակի հետագա գործերը (մասնավորապես, «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» հոդվածը), դրանցում գտել և բացահայտել է այդ «նախնական մտահղացումների» բազմաթիվ «նստվածքներ» ու հետքեր[36]:

Հատկանշական է, որ տարիներ անց անդրադառնալով իր նախկին քննադատական ելույթներին՝ գրականագետն ընդգծում է, որ, իր համոզմամբ, «բանաստեղծի սկիզբը միաժամա-

---

[33] **Սևակ Պ.,** *Երկեր 3 հատորով,* հատոր 3, էջ 554:
[34] **Սարինյան Ս.**, *Դպրույր Սևակի ստեղծագործությունը,* էջ 61:
[35] **Սևակ Պ.,** *Երկեր 3 հատորով,* հատոր 3, էջ 560–561:
[36] **Սարինյան Ս.**, *Դպրույր Սևակի ստեղծագործությունը,* էջ 61–62:

նակ իր հայտնությունը եղավ», ինչը լիարժեքորեն հաստատվել էր նաև նրա «լինելության սկիզբը ներկայացնող տակավին անհայտ էջերի «Մուտք» ժողովածուի հրատարակությամբ: Հետևապես և, ըստ Ս. Սարինյանի, արժեր «ընձեռած գրական նյութի թելադրանքով մի անգամ ևս հայացք նետել Սևակի բանաստեղծական աշխարհի ձևավորման ընթացքին, որը միանգամայն սկզբունքային նշանակություն ունի նրա ամբողջ ստեղծագործության տիպաբանությունը քննելու տեսակետից»: Արձանագրելով, որ արվեստի փիլիսոփայության որոշակի ըմբռնումներով է Պարույր Սևակը գիտակցել բանաստեղծական իր անհատականության սկիզբը, գրականագետը նշում է, թե, ուրեմն և, «միանգամայն ակներև է, որ այդ սկիզբը եղել է խորապես ըմբռնված ու նախապես ծրագրված գեղագիտական մի անսովոր ու հոյակապ համակարգ դեպի Անհայտը ձգտող փիլիսոփայական նվագներով՝ «Խոռվքի երգեր», «Մահվան Վեներա», «Խաչելության երգեր», «Հոգեվարքի երգեր», «Requiem», «Վերադարձի կարոտ»[37]:

Պարույր Սևակի ստեղծագործական անհատականության հաջորդ՝ ավելի բարձր փուլը նախանշվում է բանաստեղծի նամակներից մեկում արտահայտված այն համոզմամբ, թե «... նա՛ չէ բանաստեղծը, ով **կատարելագործում** է ինքն իրեն (իր լավը), այլ նա, ով **հաղթահարում** է ինքն իրեն (իր վատը)»[38]: Այս իմաստով, «Սևակը պատկանում է այն բացառիկ տաղանդների կարգին, որոնց յուրաքանչյուր նոր գիրքը նախորդի «հերքումն է» հանդիսանում, ասել է թե ստեղծագործական ինքնահաղթահարումը»,- գրում է Սարինյանը[39]: Նրա մեկնաբանմամբ, դա «Պարույր Սևակի ստեղծագործական ինտուիցիայի բնակերտ

---

[37] **Սարինյան Ս.**, *«Բանաստեղծի հայտնությունը»*, Երևան, «ԳԹ», 1985, թիվ 27:

[38] **Սևակ Պ.**, *Երկեր 3 հատորով*, հատոր 3, էջ 581:

[39] **Սարինյան Ս.**, *«Պարույր Սևակի ստեղծագործությունը»*, էջ 73:

զգացողությունն է, և ինքնահաղթահարման այդ տարերքի պոռթկումը «Անլռելի զանգակատունն» էր՝ «ստեղծագործական մի խիզախում, որն ամբողջ ուժով դրսևորեց նրա տաղանդի համապարփակ ունակությունը», քանզի նրանում, չնայած դեռևս նկատելի որոշ թերիների, արդեն գտնված էր «սիմֆոնիզմի այն բարդ կառուցվածքը, որին հետամուտ էր բանաստեղծը ավելի քան մեկ ու կես տասնամյակ»: Ըստ նրա՝ «Կատարված էր հայտնությունը և բնությամբ բացառիկ շնորհվածը մի կարճ ժամանակում ստեղծեց պոեմներ, (...) բանաստեղծական շարքեր, (...) որոնք նշանավորեցին հայ պոեզիայի «անցման հասակի» գեղարվեստական պատմությունը»[40]: Ապա գրականագետը, ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնելով այդ երկերը՝ «Եվ այր մի Մաշտոց անուն» (1962), «Մարդը ափի մեջ» (1963), «Եռաձայն պատարագ» (1965), «Եղիցի լույս» (1969), տալիս է դրանցից յուրաքանչյուրի խորքային, ճշգրիտ մեկնաբանությունները: Մասնավորապես, վերջին՝ «Եղիցի լույս» ժողովածուի առիթով գրականագետը շարադրում է Պարույր Սևակի անհատականության և ստեղծագործական էվոլյուցիայի վերաբերյալ իր ընդհանրացնող, առավել ամբողջական, պատմական-գիտական սկզբունքների վրա հիմնված գնահատականները: Ըստ այդմ, արձանագրում է, որ այդ ժողովածուով, «... այն, ինչ գրական շրջանակներում անհերևակայելի էր թվում «Մարդը ափի մեջ» գրքից հետո, Սևակը լուծեց այնպիսի համարձակությամբ, որ կարող է բացատրվել միայն անհավանականության օրենքով»: Նշելով այդ շարքում արդեն ակնհայտորեն ու բարձր մակարդակով արտահայտված «հղացումների համարձակությունն» ու «թափանցումների անհատակ խորությունը», «անբանաստեղծական պարադոքսները» և այլ բնորոշ հատկանիշներ՝ Սարինյանն ընդգծում է, որ «երևի այս-

[40] Նույն տեղում, էջ 66–67:

տեղ պիտի որոնել հայ քնարերգության «անցման հասակի» այն որակը, որ Սևակը անվանում է «անբանաստեղծական բանաստեղծություն»: Գրականագետի նույնքան պատկերավոր արտահայտությամբ՝ «Կարծես արարիչը բանաստեղծի ճակատին խարանել էր կիկլոպյան աչքը՝ տեսնելու աներևույթը, կռահելու անհայտը, քննելու իրերի բնությունը»: Վերջապես, այդ ամենով՝«Եղիցի լույս» (1969) ժողովածուն ոչ միայն որակական նոր աստիճանի է բարձրացնում Սևակի բանաստեղծական արվեստը, այլև մի յուրօրինակ ծրագիր–հանգանակ է առաջադրում հայ քնարերգությանը: Իր գրական-պատմական նշանակությամբ դա թերևս նախօրինակ կարող է ունենալ միայն Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին»:

Ըստ Սարինյանի՝ Սևակը նաև «հիրավի, պատմաբան էր և իր պոեզիայում արտացոլել է «հետպատերազմյան սերնդի» ճակատագիրը՝ բարդ ու հակասական որոնումներով: Լինելով մեծ անհատականություն՝ նա իր մտորումների ոլորտն առավ ժամանակի մեծ անդրադարձումները և դարձավ դարաշրջանի բանաստեղծը այս հասկացության և գրական-գեղարվեստական, և քաղաքացիական նշանակությամբ»[41]:

Մի քանի տասնամյակի ընթացքում ունեցած բազմաթիվ հրապարակումներում Ս. Սարինյանը հանգամանորեն անդրադարձել է նաև բանասեր, հայագետ, պատմաբան, միջնադարագետ, հայոց լեզվի, հայ և համաշխարհային գրականության ու մշակույթի քաջագիտակ, քննադատ–գրականագետ, հրապարակագիր և այլ որակների ու արժանիքների տեր Սևակի անհատականության բնութագրումներին, «բանաստեղծության պատկերի դիալեկտիկայի» քննությանը:

[41] Նույն տեղում, էջ 74:

Վերջապես, Պարույր Սևակի երկերի վեցհատորյակի (1972–1976) առաջաբանում[42] և 2006 թվականին լույս տեսած «Պարույր Սևակ» հոդվածների ժողովածուում հստակորեն արձանագրվել են ինքնատիպ բանաստեղծի անհատականության և ստեղծագործության վերաբերյալ ակադեմիկոս Ս. Սարինյանի ամբողջական գնահատականները: Վեցհատորյակի հրատարակության կապակցությամբ, բանաստեղծի գրական բեմելը բնութագրելով որպես «հայտնություն», նա նշում է, որ այնուհետև հրապարակած մեկը մյուսին գերազանցող երկերով «ամբողջական համակարգի է բերվել մի բարդ ու ինքնատիպ աշխարհ, առանց որի դժվար է պատկերացնել հայ գեղարվեստական խոսքի զարգացման նորագույն շրջանը»[43]:

***Եզրակացություններ***

Մի քանի տասնամյակի ընթացքում ունեցած բազմաթիվ հրապարակումներում Ս. Սարինյանը հանգամանորեն անդրադարձել է բանաստեղծ, բանասեր, հայագետ, պատմաբան, միջնադարագետ, հայոց լեզվի, հայ և համաշխարհային գրականության ու մշակույթի քաջագիտակ, քննադատ – գրականագետ, հրապարակագիր և այլ որակների ու արժանիքների տեր Սևակի անհատականության բնութագրումներին, նրա «բանաստեղծության պատկերի դիալեկտիկայի» քննությանը: Իսկ Պարույր Սևակի երկերի վեցհատորյակի (1972–1976) առաջաբանում և 2006 թվականին լույս տեսած «Պարույր Սևակ» հոդվածների ժողովածուում հստակորեն արձանագրվել են ինքնատիպ բանաստեղծի անհատականության և ստեղծագործության վերաբերյալ ակադեմիկոս Ս. Սարինյանի ամբողջական գնահատականները: Բանաստեղծի գրական բեմելը բնութագրելով որպես

---

[42] **Սարինյան Ս.**, *Պարույր Սևակի ստեղծագործությունը*, հատոր 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, էջ V–XII:

[43] **Սարինյան Ս.**, *Բանաստեղծի հայտնությունը*, Երևան, «ԳԹ», 1976, թիվ 40:

«հայտնություն», նա նշում է, որ այնուհետև հրապարակած մեկը մյուսին գերազանցող երկերով «ամբողջական համակարգի է բերվել մի բարդ ու ինքնատիպ աշխարհ, առանց որի դժվար է պատկերացնել հայ գեղարվեստական խոսքի զարգացման նորագույն շրջանը»:

**ПЕТРОС ДЕМИРЧЯН**
*Доктор филологических наук,*
*ведущий научный сотрудник*
*Института литературы НАН РА*

## ЛИЧНОСТЬ И ТВОРЧЕСТВО ПАРУЙРА СЕВАКА ПО ОЦЕНКЕ СЕРГЕЯ САРИНЯНА

### Резюме

Цель исследования – выявить оценку личности и творчества Паруйра Севака в контексте основополагающих принципов мышления академика Сергея Сариняна: системности, историчности и научности. Мышление, для которого характерно, по выражению литературоведа, переход от «мира вещей» к «миру систем», с целью раскрытия личности писателя и философского духа произведения. Однако вышеупомянутые высокие принципы открывали, с другой стороны, дверь для недоразумений и литературных дебатов. В основном это выразилось на первых шагах научного пути по поводу его критических выступлений.

Одним из важных вопросов, рассматриваемых с этой точки зрения, является, раскрытие процесса саринианского отношения, оценки личности и поэзии Паруйра Севака, точнее, динамики развития этого процесса, актуальное значение которой состоит в том, что она может быть поучительна с точки зрения освещения современного литературного процесса.

Соответственно, в исследовании аналитически-герменевтическими методами подробно анализируются критические и литературоведческие отклики Сариняна на сборники произведений П. Севака «Снова с тобой» (1958), «Неумолкаемая колокольня» (1959), «Человек на ладони» (1963), «Да будет свет» (1969) и других, а также на литературные дебаты, которые время от времени разгорались вокруг них.

После поэмы «Неумолкаемая колокольня», представляющего собой порыв самопреодолевающей стихии, П. Севак за короткое время создал стихи и поэтические серии, которые, по словам Сариняна, «ознаменовали художественную историю «переходного возраста» армянской поэзии.

Во многих публикациях на протяжении нескольких десятилетий С. Саринян также подробно остановился на личностных характеристиках Севака филолога, арменолога, историка, медиевиста, поэта отлично знающего армянский язык, армянскую и мировую литературу, культуру, литературного критика, публициста и других качествах и заслугах, а также на его рассмотрении «диалектики поэтического образа».

Наконец, в предисловии к шеститомному сборнику стихов Паруйра Севака (1972–1976) и в сборнике статей «Паруйр Севак», изданном в 2006 году, отразились полные оценки академика С. Сариняна личности и творчества самобытного писателя. Характеризуя творческие первые шаги поэта как «открытие», он отмечает, что опубликованными им в дальнейшие годы произведениями, превосходящими одно другое, «был приведен в целостную систему сложный и самобытный мир, без которого трудно представить новейший период развития армянского художественного слова».

***Ключевые слова:*** *Паруйр Севак, Сергей Саринян, поэтическая личность, принципы историчности, научности, философский дух.*

**PETROS DEMIRCHYAN**
*Doctor of Philological Sciences, Senior Researcher of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA*

# PARUYR SEVAK'S PERSONALITY AND CREATIVITY ACCORDING TO SERGEY SARINYAN

**Abstract**

The **purpose** of the study is to reveal the evaluation of Paruyr Sevak's personality and work in the context of the fundamental principles of academician Sergey Sarinyan's thought: systematicity, historicity, and scientific rigor. The process of thinking, which, in the words of the literary scholar, is characterized by a transition from the "world of things" to the "world of systems", seeks to uncover the writer's personality and the philosophical spirit of his work. However, these high principles, on the other hand, also opened the door to misunderstandings and literary debates. This was mainly expressed in the early stages of his academic career, particularly in relation to his critical statements.

One of the important issues examined from this point of view is, in particular, the discovery of the process of Sarinyan's attitude and appreciation of Paruyr Sevak's personality and poetry, more specifically, **the development dynamics**, **the current significance of which** is that it can be instructive from the point of view of covering the modern literary process.

Accordingly, the study employs analytical and hermeneutic methods to closely examine Sarinyan's critical and literary responses

to Paruyr Sevak's collections "With You Again" (Norits Qez Het, (1958), "The Incessant Bell-tower." (Anlreli Zangakatun, (1959), "The Man in the Palm" (Mardy Api Mej), (1963), "Let There Be Light" (Yeghitsi Luys, (1969) among others, as well as the literary debates that occasionally flared up around them.

After the poem "The Unceasing Bell Tower", (Anlreli Zangakatun), which is an outburst of self-overcoming elements, P. Sevak created poems and poetic series in a short time, which, according to Sarinyan, "marked the artistic history of the "transition age" of Armenian poetry".

In numerous publications over several decades, S. Sarinyan also gave detailed attention to the personal qualities of Sevak – a philologist, Armenologist, historian, medievalist, and poet, deeply knowledgeable in the Armenian language, Armenian and world literature and culture, a literary critic, publicist, and a figure distinguished by many other virtues and accomplishments – as well as to his interpretation of the "dialectics of the poetic image".

Finally, in the preface to the six-volume collection of Paruyr Sevak's poems (1972–1976) and in the collection of articles "Paruyr Sevak", published in 2006, academician S. Sarinyan's full assessment of the unique writer's personality and work is reflected. Describing the poet's early creative steps as a "revelation", he notes that in the works published in the following years – each surpassing the other – "a complex and original world was brought into a coherent system, a world without which it is difficult to imagine the modern stage in the development of Armenian artistic expression".

***Keywords:*** *Paruyr Sevak, Sergey Sarinyan, poetic personality, principles of historicity, science, philosophical spirit.*